Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
մարտի 12-ի N 287 - Ն որոշման

ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

Քաղ. Երևան ____ _____ 20 թ.

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայությունը (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ ի դեմս Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության պետ _____ -ի, ով գործում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի հունիսի 14-ի թիվ 74-Լ հրամանով հաստատված՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության կանոնադրության հիման վրա, և _____ ընկերությունը՝ ի դեմս _____-ի, ով գործում է իր կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ բանկ) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն պայմանագրում կիրառվող հասկացություններն են՝

1) **միանվագ դրամական վճարի գումար՝** Կառավարության ---------- որոշման 3-րդ կետում նշված գումար.

2) **բանկային հաշիվ՝** բանկում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով բացված միանվագ դրամական վճարների հաշիվ.

3) **շահառու՝** անձ, ում տվյալները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներառվել են վճարման ցուցակում (ում անվամբ բացվում է բանկային հաշիվ).

4) **պահանջ՝** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջ (բանկային հաշվին առկա միջոցները դուրս գրելու կարգադրություն).

5) **այլ անձ՝** անձ, ով բանկ է ներկայացրել շահառուի տված՝ նոտարական կարգով վավերացված կամ դրան հավասարեցված՝ պահանջ (բանկային հաշվին առկա միջոցները դուրս գրելու կարգադրություն) ներկայացնելու վերաբերյալ լիազորագիր կամ անձ, ում տվյալները բանկին տրամադրում է լիազոր մարմինը՝ շահառուի անվամբ բացված բանկային հաշիվ մուտքագրված միանվագ դրամական վճարի գումարը նրան վճարելու համար.

6) **անձը հաստատող փաստաթուղթ՝**

ա. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացու նույնականացման քարտ,

բ. օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ օրենքով կամ միջազգային պայմանագրով սահմանված՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքը (կացության կարգավիճակը) հաստատող փաստաթուղթ,

գ. փախստականի կարգավիճակ ունեցող անձի համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ:

2. Լիազոր մարմինը բանկին է տրամադրում սույն պայմանագրի N 1 ձևում նշված տեղեկատվությունը (այսուհետ՝ վճարման ցուցակ), իսկ բանկը, վճարման ցուցակում ներառված տվյալների հիման վրա, շահառուի անվամբ բացում է բանկային հաշիվ և այդ հաշվին է մուտքագրում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վճարվող միանվագ դրամական վճարի գումարը:

3. Կողմերն անվերապահորեն ընդունում են, որ՝

1) շահառուն հաճախորդի (բանկային հաշվի տիրոջ) իրավունք է ձեռք բերում վճարման ցուցակը և վճարման ենթակա գումարը բանկի կողմից ստանալու օրվան հաջորդող օրվանից հետո բանկին պահանջ ներկայացնելու պահից, եթե լիազոր մարմնի ներկայացրած տվյալները համապատասխանում են շահառուի վերաբերյալ ներկայացրած տվյալներին.

2) բանկին պահանջ կարող է ներկայացնել նաև այլ անձը.

3) բանկին պահանջ ներկայացնելու դեպքում շահառուի անվամբ բացված բանկային հաշվին առկա միջոցները դուրս են գրվում մասնակի կամ ամբողջությամբ, իսկ բանկային

հաշիվը, առանց շահառուի և բանկի կամ այլ անձի և բանկի միջև բանկային հաշվի սպասարկման պայմանագիր կնքելու, սպասարկվում է՝ մինչև դրանում առկա միջոցներն ամբողջությամբ դուրս գրելը, որից հետո բանկային հաշիվը փակվում է.

4) յուրաքանչյուր վճարման ցուցակի հիման վրա շահառուի անվամբ բացվում է նոր (առանձին) բանկային հաշիվ.

5) բանկային հաշվին մուտքագրվում է բացառապես միանվագ դրամական վճարի գումարը.

6) բանկային հաշվին մուտքագրված միանվագ դրամական վճարի գումարը վերադարձվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, եթե շահառուն կամ այլ անձը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված 12-ամսյա ժամկետում (մինչև վճարման ցուցակը, այդ թվում՝ բանկային հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալները բանկին փոխանցելու ամսվանից հաշված՝ 12-րդ ամսվա վերջին աշխատանքային օրը) չի ներկայացրել պահանջ:

4. Սույն պայմանագրի ձևերը և սույն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տեղեկատվությունները) լիազոր մարմնի և բանկի միջև փոխանակվում են (CBANet միջբանկային համակարգչային ցանցի միջոցով):

5. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունը բանկի կողմից լիազոր մարմնին մատուցված է համարվում հաշվետու ամսվա ընթացքում վճարման արդյունքների մասին սույն պայմանագրի N 2 ձևով սահմանված տվյալներ պարունակող փոխադարձ հաշվարկների ակտի հաստատման պահից:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Կողմերն իրավունք ունեն՝

1) սույն պայմանագրով սահմանված կարգով դադարեցնելու պայմանագրի գործողությունը.

2) օրենքով սահմանված կարգով բողոքարկելու մյուս կողմի գործողությունները և (կամ) անգործությունը.

3) իրականացնելու օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն պայմանագրով նախատեսված այլ իրավունքներ:

7. Բանկը պարտավոր է՝

1) վճարման ցուցակը և վճարման ենթակա գումարն ստանալու օրվան հաջորդող օրվանից հետո բանկին պահանջ ներկայացվելու դեպքում կատարել բանկային հաշվին առկա միջոցները դուրս գրելու կարգադրությունը՝ բանկային հաշվին առկա միջոցները մասնակի կամ ամբողջությամբ վճարել հաճախորդին (շահառուին) կամ այլ անձին.

2) բանկային հաշվին առկա միջոցները մասնակի կամ ամբողջությամբ դուրս գրելու (բանկային հաշվին առկա միջոցները վճարելու) վերաբերյալ նոտարի վավերացրած կամ դրան հավասարեցված լիազորագրի կամ լիազոր մարմնի՝ սույն պայմանագրի N 3 ձևով սահմանված տեղեկատվությունը պարունակող կարգադրության հիման վրա բանկային հաշվին առկա միջոցները տրամադրել (վճարել) այլ անձի՝ կարգադրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հետո կատարել բանկային հաշվին առկա միջոցները մասնակի կամ ամբողջությամբ դուրս գրելու այլ անձի պահանջը.

3) լիազոր մարմնի՝ սույն պայմանագրի N 4 ձևով սահմանված տեղեկատվությունը պարունակող կարգադրության (պահանջի) հիման վրա, այն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ, դրանում նշված գումարի չափով, առանց շահառուի համաձայնության, նրա բանկային հաշվից հետ գանձել միջոցները (բավարար միջոցներ չլինելու դեպքում՝ բանկային հաշվում առկա հասանելի մնացորդի չափով) և ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ միաժամանակ ապահովելով սույն պայմանագրի N 5 ձևով սահմանված տեղեկատվության ներկայացումը լիազոր մարմին: Բանկը պատասխանատվություն չի կրում բանկային հաշիվ մուտքագրված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ (սխալ) վճարված այն գումարների համար, որոնք հաճախորդի /շահառուի/ կարգադրության հիման վրա բանկային հաշվից դուրս են գրվել (ելքագրվել են)՝ մինչև լիազոր մարմնից սույն ենթակետում նշված կարգադրությունը (պահանջը) ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը.

4) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում (վճարման ցուցակը, այդ թվում՝ բանկային հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալները բանկին փոխանցելու ամսվանից հաշված՝ 12 ամսվա ընթացքում) շահառուի կամ այլ անձի կողմից հաշվով գործարք չիրականացվելու դեպքում, այդ ժամկետը լրանալուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրվանից ոչ ուշ, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե հետ փոխանցել այդ բանկային

հաշվին մուտքագրված միանվագ դրամական վճարի գումարը և սույն պայմանագրի N 6 ձևով սահմանված տեղեկատվությունը ներկայացնել լիազոր մարմին.

5) յուրաքանչյուր ամսվա 3-րդ աշխատանքային օրվանից ոչ ուշ լիազոր մարմնին տրամադրել սույն պայմանագրի N 7 ձևով սահմանված տեղեկատվություն այն բանկային հաշիվների վերաբերյալ, որոնցով նախորդ ամսվա ընթացքում ներկայացվել է պահանջ (պահանջի հիման վրա բանկային հաշվին առկա միջոցները մասնակի կամ ամբողջությամբ դուրս են գրվել).

6) շահառուի մահվան մասին տեղեկատվություն ստանալու օրվան (սույն պայմանագրի իմաստով՝ մահվան մասին տեղեկատվություն ստանալու օր է համարվում շահառուի մահվան վկայականը կամ դրա պատճենը բանկ ներկայացնելու օրը) հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ սույն պայմանագրի N 8 ձևով սահմանված տվյալները ներկայացնել լիազոր մարմնին.

7) շահառուին կամ այլ անձին (ում տվյալները բանկին տրամադրում է լիազոր մարմինը՝ շահառուի անվամբ բացված բանկային հաշիվ մուտքագրված միանվագ դրամական վճարի գումարը նրան վճարելու համար) սպասարկել նաև այն դեպքում, երբ նա ներկայացնում է վճարման ցուցակում կամ սույն պայմանագրի N 3 ձևով սահմանված կարգադրությունում նշված՝ անձը հաստատող փաստաթղթից տարբեր այլ՝ անձը հաստատող վավեր փաստաթուղթ, եթե դրանով բանկը կարողանում է նույնականացնել այդ անձին:

8. Լիազոր մարմինը պարտավոր է՝

1) տվյալ ամսվա վճարման ցուցակը, այդ թվում՝ բանկային հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալները բանկին տրամադրելու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ բանկի հաշվին փոխանցել վճարման ենթակա ամբողջ գումարը.

2) «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ապահովել սույն պայմանագրի շրջանակներում իրեն հայտնի դարձած՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության գաղտնիությունը.

3) շահառուի մահվան մասին տեղեկատվություն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ սույն պայմանագրի N 8 ձևով սահմանված տվյալները ներկայացնել բանկ.

4) սույն պայմանագրով սահմանված դեպքերում բանկ ներկայացնել կարգադրություն կամ տրամադրել տեղեկատվություն:

III. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9. Սույն պայմանագրում նշված ծառայությունները (այդ թվում՝ լիազոր մարմնի տրամադրած տվյալների հիման վրա անձի անվամբ բանկային հաշիվ բացելը և այն մինչև բանկային հաշվին առկա միջոցներն ամբողջությամբ դուրս գրելը սպասարկելը) բանկը մատուցում է անվճար:

IV. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

10. Սույն պայմանագրի կապակցությամբ վեճեր ու տարաձայնություններ առաջանալու դեպքում դրանք լուծվում են տասնհինգ օրվա ընթացքում՝ բանակցությունների միջոցով, իսկ բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

11. Վեճերի ու տարաձայնությունների վերաբերյալ բանակցությունների կամ դատական գործընթացների ժամանակահատվածում կողմերը պարտավոր են գործել սույն պայմանագրի համաձայն:

V. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

12. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ լրացուցիչ համաձայնագրեր կնքելու միջոցով, որոնք կկազմեն սույն պայմանագրի անբաժանելի մասը:

13. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

14. Սույն պայմանագիրը լուծվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելու դեպքում: Պայմանագիրը լուծելու վերաբերյալ առաջարկությունը մի կողմը մյուս կողմին ներկայացնում է պայմանագրի լուծման նախատեսվող ժամկետից առնվազն երկու ամիս առաջ:

15. Պայմանագիրը լուծելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացնող կողմը պարտավոր է պայմանագիրը լուծելու մասին պատշաճ կարգով ծանուցել շահառուներին՝ պայմանագրի լուծման նախատեսվող ժամկետից առնվազն մեկ ամիս առաջ: Սույն

պայմանագրի իմաստով պատշաճ կարգով ծանուցում է համարվում պայմանագիրը լուծելու մասին դիմումում նշված՝ հեռախոսահամարին հաղորդագրություն կամ էլեկտրոնային փոստի հասցեով տեղեկատվություն ուղարկելը կամ շահառուի բնակության վայրի հասցեով ծանուցելը:

16. Սույն պայմանագիրը լուծվում է լուծման օրվա դրությամբ պայմանագրով ստանձնած պարտավորությունները կողմերի կողմից պատշաճ կատարելու, ինչպես նաև չկատարելու հետևանքով կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասները լրիվ հատուցելու պայմանով:

17. Սույն պայմանագիրն իրավաբանական ուժ է ստանում այն կնքելու օրը, իսկ սույն պայմանագրի 18-րդ կետում նշված դեպքում՝ այդ կետում նշված համաձայնագրով նախատեսված՝ սույն պայմանագիրը կատարելու համար անհրաժեշտ ծրագրային ապահովումը ներդնելու օրը և գործում է անորոշ ժամկետով:

18. Ըստ անհրաժեշտության՝ սույն պայմանագիրը կատարելու համար անհրաժեշտ ծրագրային ապահովումը մշակվում և ներդրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված՝ սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող լրացուցիչ համաձայնագրի համաձայն՝ սույն պայմանագիրը կնքելու ամսվան հաջորդող 3-րդ ամսվանից ոչ ուշ:

19. Եթե կողմերը կնքել են Հայաստանի Հանրապետության կառավարության ---------- որոշման 7-րդ կետի 1-ին ենթակետում նշված՝ պայմանագիր, որը սույն պայմանագիրն իրավաբանական ուժ ստանալու օրվա դրությամբ գործում է, ապա սույն պայմանագիրն իրավաբանական ուժ ստանալու օրվա դրությամբ նախկինում կնքված պայմանագիրը լուծվում է:

20. Սույն պայմանագրի 19-րդ կետում նշված դեպքում, սույն պայմանագիրն իրավաբանական ուժ ստանալու օրվա դրությամբ բանկում բացված հաշիվը, որի հաշվետիրոջ իրավունքն անձը պետք է ձեռք բերի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 910-րդ հոդվածին համապատասխան, համարվում է սույն պայմանագրի 2-րդ կետով սահմանված կարգով բացված բանկային հաշիվ, իսկ սույն պայմանագրի 3-րդ կետի 6-րդ և 7-րդ կետի 4-րդ ենթակետերում նշված՝ բանկային հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալները բանկին փոխանցելու ամիս է համարվում համապատասխան միանվագ դրամական վճարի գումարը (վճարման ցուցակը) բանկին փաստացի փոխանցելու ամսվան հաջորդող ամիսը:

VI. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայություն

Գտնվելու վայրը՝ ՀՀ, քաղ. Երևան, Նալբանդյան 13
Հեռ. _____
Էլ. փոստ _____

Ծառայության պետ _____
(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

_____

_____

Գտնվելու վայրը՝ _____
_____
Հեռ. _____
Էլ. փոստ _____
ՀՎՀՀ _____

_____
(համապատասխան լիազորություններով օժտված անձի պաշտոնը)

_____
(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Ձև N 1
միանվագ դրամական վճարների
պայմանագրի

Ց Ա Ն Կ
ՎՃԱՐՄԱՆ ՑՈՒՑԱԿ ՆԵՐԱՌՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆԸ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԲԱՆԿԻՆ

1) բանկի անվանումը (ծածկագիրը), վճարման ցուցակը բանկին ուղարկելու օրը, ամիսը, տարին, վճարման ցուցակի հերթական համարը.

2) շահառուի անունը, ազգանունը, առկայության դեպքում՝ հայրանունը.

3) շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.

4) միանվագ դրամական վճարի գործի համարը, միանվագ դրամական վճարի տեսակը և վճարման ենթակա գումարի չափը.

5) շահառուի բնակության վայրի հասցեն, առկայության դեպքում՝ նաև էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը:

Ձև N 2
միանվագ դրամական վճարների
պայմանագրի

Ց Ա Ն Կ
ՀԱՇՎԵՏՈՒ ԱՄՍՈՒՄ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԿԱՏԱՐԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԱԿՏ ՆԵՐԱՌՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԲԱՆԿԸ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ

1) բանկի անվանումը (ծածկագիրը), հաշվետու ամսում բանկ տրամադրված վճարման ցուցակների հերթական համարները.

2) հաշվետու ամսվա տարեթիվն ու ամիսը, որին վերաբերում է փոխադարձ հաշվարկների ակտը.

3) հաշվետու ամսվա ստացված վճարման ցուցակների թիվը, այդ ցուցակներ ներառված անձանց ընդհանուր թիվը.

4) հաշվետու ամսվա վճարման ցուցակների հիման վրա վճարման ենթակա (բանկին փոխանցված) միանվագ դրամական վճարների ընդամենը գումարը.

5) այն անձանց ընդհանուր թիվը, որոնք հաշվետու ամսվա ընթացքում բանկ են ներկայացրել պահանջ (բանկային հաշվին առկա միջոցները մասնակի կամ ամբողջությամբ վճարելու կարգադրություն).

6) հաշվետու ամսվա ընթացքում պահանջի ներկայացմամբ անձանց վճարված միանվագ դրամական վճարների ընդամենը գումարի չափը.

7) հաշվետու ամսվա ընթացքում անձանց բանկային հաշիվներին մուտքագրված միանվագ դրամական վճարների ընդամենը գումարի չափը.

8) այն բանկային հաշիվների թիվը, որոնցից հաշվետու ամսվա ընթացքում լիազոր մարմնի կարգադրության հիման վրա միանվագ դրամական վճարի գումարը (գումարի մնացորդը) բանկը վերադարձրել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

9) լիազոր մարմնի կարգադրության հիման վրա բանկի կողմից հաշվետու ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձված միանվագ դրամական վճարների գումարների հանրագումարը.

10) այն անձանց (նպաստի գործերի) թիվը, որոնց վճարման ենթակա միանվագ դրամական վճարների գումարները, բանկային հաշիվ բացելու համար անհրաժեշտ

տվյալները բանկին փոխանցելու ամսվանից հաշված՝ 12 ամիսների ընթացքում պահանջը չներկայացնելու հիմքով հաշվետու ամսվա ընթացքում բանկը վերադարձրել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

11) բանկային հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալները բանկին փոխանցելու ամսվանից հաշված՝ 12 ամիսների ընթացքում պահանջը չներկայացնելու հիմքով հաշվետու ամսվա ընթացքում բանկի կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձրած միանվագ դրամական վճարների գումարների հանրագումարը.

12) մնացորդը հաշվետու ամսվա առաջին աշխատանքային օրվա դրությամբ.

13) մնացորդը հաշվետու ամսվա վերջին աշխատանքային օրվա դրությամբ:

Ձև N 3
միանվագ դրամական վճարների
պայմանագրի

Ց Ա Ն Կ
ՀԱՇՎԵՏՈՒ ԱՄՍՈՒՄ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԳՈՒՄԱՐՆ ԱՅԼ ԱՆՁԻ ՎՃԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆԸ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԲԱՆԿԻՆ

1) բանկի անվանումը (ծածկագիրը), այլ անձի վճարելու համար անհրաժեշտ տվյալների ցանկը բանկին ուղարկելու օրը, ամիսը, տարին.

2) այլ անձի (ում պետք է վճարվի բանկային հաշիվ մուտքագրված միանվագ դրամական վճարի գումարը) անունը, ազգանունը, առկայության դեպքում՝ հայրանունը.

3) այլ անձի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.

4) միանվագ դրամական վճարի գործի համարը, միանվագ դրամական վճարի տեսակը.

5) վճարման ցուցակը (որի հիման վրա բացվել է բանկային հաշիվը) բանկին ուղարկելու օրը, ամիսը, տարին, վճարման ցուցակի հերթական համարը:

Ձև N 4
միանվագ դրամական վճարների
պայմանագրի

Ց Ա Ն Կ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՄԲ ՎՃԱՐՎԱԾ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԱՄՍՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆԸ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԲԱՆԿԻՆ

1) բանկի անվանումը (ծածկագիրը), ցանկը բանկին ուղարկելու օրը, ամիսը, տարին.

2) շահառուի անունը, ազգանունը, առկայության դեպքում՝ հայրանունը.

3) շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ վճարված և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձման ենթակա՝ միանվագ դրամական վճարի գործի համարը, միանվագ դրամական վճարի տեսակը և գումարի չափը.

5) վճարման ցուցակը (որի հիման վրա բանկին է փոխանցվել Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ վճարված և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձման ենթակա միանվագ դրամական վճարի գումարը) բանկին ուղարկելու օրը, ամիսը, տարին, վճարման ցուցակի հերթական համարը.

6) գանձապետական հաշիվը, որին պետք է փոխանցել (վերադարձնել) Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ վճարված գումարը:

Ձև N 5
միանվագ դրամական վճարների
պայմանագրի

Ց Ա Ն Կ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՄԲ ՎՃԱՐՎԱԾ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԱՄՍՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎԵՐԱԴԱՐՁՎԱԾ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԲԱՆԿԸ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ

1) բանկի անվանումը (ծածկագիրը), ցանկը բանկին ուղարկելու օրը, ամիսը, տարին.

2) շահառուի անունը, ազգանունը, առկայության դեպքում՝ հայրանունը.

3) շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ վճարված և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձման ենթակա միանվագ դրամական վճարի գործի համարը, միանվագ դրամական վճարի տեսակը և բանկային հաշվին մուտքագրված գումարի չափը.

5) վճարման ցուցակը (որի հիման վրա բանկին է փոխանցվել Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ վճարված և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձման ենթակա միանվագ դրամական վճարի գումարը) բանկին ուղարկելու օրը, ամիսը, տարին.

6) փաստացի Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված (վերադարձված)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ վճարված միանվագ դրամական վճարի գումարի չափը.

7) գանձապետական հաշիվը, որին փոխանցվել է (վերադարձվել է) Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ վճարված գումարը.

8) Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ վճարված միանվագ դրամական վճարի գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու (վերադարձնելու) օրը, ամիսը, տարին:

Ձև N 6
միանվագ դրամական վճարների
պայմանագրի

Ց Ա Ն Կ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 928.8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԲԱՆԿԻՆ ՊԱՀԱՆՋ ՉՆԵՐԿԱՅԱՑՎԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԱՄՍՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎԵՐԱԴԱՐՁՎԱԾ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԲԱՆԿԸ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ

1) բանկի անվանումը (ծածկագիրը), ցանկը բանկին ուղարկելու օրը, ամիսը, տարին.

2) շահառուի անունը, ազգանունը, առկայության դեպքում՝ հայրանունը.

3) շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.

4) Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված (վերադարձված) միանվագ դրամական վճարի գործի համարը, միանվագ դրամական վճարի տեսակը.

5) վճարման ցուցակը (որի հիման վրա բանկին է փոխանցվել միանվագ դրամական վճարի գումարը) բանկին ուղարկելու օրը, ամիսը, տարին, վճարման ցուցակի հերթական համարը.

6) Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված (վերադարձված) միանվագ դրամական վճարի գումարի չափը.

7) գանձապետական հաշիվը, որին փոխանցվել է (վերադարձվել է) միանվագ դրամական վճարի գումարը.

8) միանվագ դրամական վճարի գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու (վերադարձնելու) օրը, ամիսը, տարին:

Ձև N 7
միանվագ դրամական վճարների
պայմանագրի

Ց Ա Ն Կ
ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՇՎԵՏՈՒ ԱՄՍՈՒՄ ՄԱՄՆԱԿԻ ԿԱՄ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԴՈՒՐՍ ԳՐԵԼՈՒ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԲԱՆԿԸ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ

1) բանկի անվանումը (ծածկագիրը), ցանկը բանկին ուղարկելու օրը, ամիսը, տարին.

2) շահառուի անունը, ազգանունը, առկայության դեպքում՝ հայրանունը.

3) շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.

4) միանվագ դրամական վճարի գործի համարը, միանվագ դրամական վճարի տեսակը.

5) վճարման ցուցակը (որի հիման վրա բանկին է փոխանցվել միանվագ դրամական վճարի գումարը) բանկին ուղարկելու օրը, ամիսը, տարին, վճարման ցուցակի հերթական համարը.

6) բանկային հաշվին առկա միջոցներն ամբողջությամբ կամ մասնակի դուրս գրելու պահանջ ներկայացնելու օրը, ամիսը, տարին:

Ձև N 8
միանվագ դրամական վճարների
պայմանագրի

Ց Ա Ն Կ
ՄԱՀԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՏՎՅԱԼՆԵՐԻ

1) բանկի անվանումը (ծածկագիրը), ցանկը բանկին ուղարկելու օրը, ամիսը, տարին.

2) մահացած շահառուի անունը, ազգանունը, առկայության դեպքում՝ հայրանունը.

3) մահացած շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.

4) միանվագ դրամական վճարի գործի համարը, միանվագ դրամական վճարի տեսակը.

5) վճարման ցուցակը (որի հիման վրա բանկին է փոխանցվել միանվագ դրամական վճարի գումարը) բանկին ուղարկելու օրը, ամիսը, տարին, վճարման ցուցակի հերթական համարը.

6) շահառուի մահվան օրը, ամիսը, տարին: